

(77-78) Գետի լայնությունը 5 մ է, միջին խորությունը՝ 80 սմ, ջրի արագությունը՝ 2 մ/վ.

77 Որոշել գետի ծախսը:

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

78 Որոշել գետի հոսքը 3 ժամում:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

(79-80) Երկրի բնակչության թիվը 90 000 է, բնական աճի գործակիցը՝ 15 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1800 մարդ, արտագաղթը՝ 700 մարդ.

79 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

80 Որոշել բնակչության թիվը մեկ տարի անց:

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:


Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չնոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Նկարում Ա տառով նշված է.



- 1) հրաբխի մղանցքը
- 2) լավային հոսքը
- 3) հրաբխի խառնարանը
- 4) մագմային օջախը

2 1 : 80 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի միջև հեռավորությունը 6 սմ է: Դրանց միջև իրական հեռավորությունը կլինի.

- 1) 480 կմ
- 2) 4800 կմ
- 3) 4,8 կմ
- 4) 48 կմ

3 Աշխարհագրական լայնությունները լինում են.

- 1) 0°–270°
- 2) 0°–360°
- 3) 0°–90°
- 4) 0°–180°

4 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Սեպտեմբերի 23–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հյուսիսային բևեռային շրջագծի վրա:
- 2) Մարտի 21–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:
- 3) Հունիսի 22–ի կեսօրին Արեգակը լինում է գենիթում հվ. լ. 23° 30′ գուգահեռականի վրա:
- 4) Դեկտեմբերի 22–ի կեսօրին Արեգակը լինում է գենիթում հս. լ. 23° 30′ գուգահեռականի վրա:

75 Քարտեզում ՀՀ հողային ո՞ր տիպն է նշված Ա տառով.


- 1) աղուտ–ալկալի հողեր (աղուտներ)
- 2) լեռնային սևահողեր
- 3) կուլտուր–ոռոգելի հողեր
- 4) անապատակիսաանապատային



76 Մարզի ապահովվածությունը ածխի պաշարներով կազմում է 60 տ/մարդ, ածխի պաշարները՝ 2 400 000 տ: Որքան կլինի մարզի բնակչության թիվը:

Քարտեզում ո՞ր ռասայի տարածման շրջաններն են պատկերված Գ տառով.

- 1) եվրոպեոիդ
- 2) ավստրալոիդ
- 3) նեգրոիդ
- 4) մոնղոլոիդ



5

Արտածին ուժերի ազդեցությամբ Երկրի մակերևութային ապարների քայքայման, մանրացման և վերափոխման երևույթը կոչվում է.

- 1) կուտակում
- 2) հողմահարում
- 3) տեղատարում
- 4) լեռնագոյացում

6

Բացարձակ խոնավության հարաբերությունը խոնավության այն քանակին, որն անհրաժեշտ է տվյալ ջերմաստիճանի օդը հագեցնելու համար, կոչվում է.

- 1) միջին խոնավություն
- 2) նվազագույն խոնավություն
- 3) առավելագույն խոնավություն
- 4) հարաբերական խոնավություն

7

Երկու ջրային ավազաններն իրար միացնող ջրային նեղ տարածությունը կոչվում է.


- 1) ծով
- 2) փողրակ
- 3) ծովածոց
- 4) նեղուց

8

Մեծ Արարատի բացարձակ բարձրությունը 5165 մ է, Արարատյան դաշտինը՝ 850 մ: Մեծ Արարատի հարաբերական բարձրությունը կլինի.

- 1) 4547 մ
- 2) 6015 մ
- 3) 4315 մ
- 4) 5823 մ


9 Ո՞ր քամիներն են պատկերված.



- 1) մուսսոններ
- 2) լեռնահովտային քամիներ
- 3) բրիզներ
- 4) պասսատներ

10 Նկարում ո՞ր թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը հասարակածային լայնություններում.

- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2



11 «Օվկիանոս — ծով» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Հնդկական — Կարմիր
- 2) Հյուսիսային սառուցյալ — Բերինգի
- 3) Խաղաղ — Բարենցի
- 4) Ատլանտյան — Կարայի

70 Արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումների հետևանքով առավել աղտոտված բնակավայրեր են.

- 1) Չարենցավանը և Արմավիրը
- 2) Վեդին և Սպիտակը
- 3) Արարատը և Ագարակը
- 4) Ջերմուկը և Դիլիջանը

71 Վառելիքաէներգետիկ ռեսուրսներով աղքատ են.

- 1) Ռուսաստանը և Չինաստանը
- 2) Իրանը և Ղազախստանը
- 3) Ճապոնիան և Իտալիան
- 4) ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան

72 Հակաերոզիոն միջոցառում չէ.

- 1) առաջավոր ագրոտեխնիկան
- 2) գենոֆոնդի պահպանումը
- 3) հողաբարելավումը
- 4) հողերի վերակուլտիվացիան

73 Կենսաբանական աղտոտիչ է (են).

- 1) ջերմությունը
- 2) էլեկտրամագնիսական դաշտը
- 3) վիբրացիան
- 4) բակտերիաները

65 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) ՀՀ կուլտուր-ռոռզելի հողերը տարածվում են սևահողային տափաստանների ենթագոտում:
- 2) ՀՀ անապատակիսաանապատային լանդշաֆտներն առաջացել են Արարատյան գոգավորությունում և Վայքում անտառների անխնա ոչնչացման հետևանքով:
- 3) ՀՀ անտառների վերին և մերձալայան գոտու մարգագետինների ստորին սահմանների միջև տարածվում են չորասեր նոսր անտառները:
- 4) ՀՀ մերձալայան և ալայան լանդշաֆտներում բարձր է Արեգակի ճառագայթային էներգիայի ինտենսիվությունը (ուժգնությունը):

66 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) ՀՀ-ում ամենաշատ տեղումներ թափվում են Արագած և Կապուտջուղ լեռնագագաթներին:
- 2) ՀՀ-ում գրանցված ամենացածր ջերմաստիճանը $-42,6^{\circ}\text{C}$ է:
- 3) Տարվա ընթացքում ամպամած օրերի թիվը ամենաքիչը Մարտունիում է:
- 4) ՀՀ-ում ամենաբարձր ջերմաստիճանը (42°) գրանցվել է Արարատյան դաշտում (Երասխ):

67 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) ՀՀ բնակչության ամենամեծ խտության ցուցանիշով առանձնանում է Սևանի ավազանը:
- 2) ՀՀ մշտական բնակչության վերին սահմանը 2400 մ է:
- 3) ՀՀ-ն, իր հարևանների համեմատ, ամենացածր ուրբանիզացման մակարդակ ունեցող երկիրն է:
- 4) ՀՀ ազգային փոքրամասնություններից են արաբները և ադրբեջանցիները:

68 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
- 2) Ալյումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
- 3) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
- 4) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:

69 **Ի՞նչն է ընդհանուր Գյումրի և Հրազդան քաղաքների համար.**

- 1) գործում են հզոր ջերմաէլեկտրակայաններ
- 2) գործում են ցեմենտի արտադրության խոշոր ձեռնարկություններ
- 3) երկաթուղային հանգույցներ են
- 4) արդյունաբերության առաջատար ճյուղը պղնձաձուլությունն է

12 **Ո՞ր բնական գոնային է բնորոշ ավելցուկային խոնավությունը.**

- 1) տունդրայի
- 2) բարեխառն գոտու տափաստանների
- 3) սավաննաների և նոսր անտառների
- 4) անապատների և կիսաանապատների

13 **Բնութագրումով որոշել լիճը.**

Ամուղարյա և Միրդարյա գետերը թափվում են մնացորդային ծագման այդ լճի մեջ: Այդ գետերի ջրերը ռոռզման նպատակով օգտագործելու պատճառով լիճը ծանծաղել է: Ո՞ր լիճն է.

- 1) Կասպից
- 2) Իսիկ Կուլ
- 3) Արայան
- 4) Բալխաշ

14 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Կենտրոնաավստրալական դաշտավայրի տարածքում է ստորերկրյա ջրերի Մեծ արտեզյան ավազանը:
- 2) Ավստրալիայի ամենախոշոր հոսուն լիճը Էյրն է:
- 3) Ավստրալիայի ներքին՝ ընդարձակ շրջանները (տարածքի 60 %-ը) հոսք չունեն դեպի օվկիանոս:
- 4) Ներքին շրջանների գետերը մշտական հոսք չունեն, և այստեղ շատ են չոր գետահուները՝ քրիկները:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Քարոլորտի սալերի և մայրցամաքների սահմանները ճշգրտորեն համընկնում են:
- 2) Քարոլորտի սալերի իրար մոտենալու և սեղմվելու հետևանքով առաջանում են ընդարձակ հարթավայրեր:
- 3) Մայրցամաքային և օվկիանոսային երկրակեղևների կառուցվածքը նույնն է:
- 4) Երկրակեղևի ամենաակտիվ, երկրաշարժավտանգ գոտիները գեոսինկլինային շրջաններն են:

16 **«Ծով — կղզի» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Ադրիատիկ ծով — Կորսիկա կղզի
- 2) Օխոտի ծով — Սախալին կղզի
- 3) Արաբական ծով — Շրի Լանկա կղզի
- 4) Կարիբյան ծով — Նյուֆաունդլենդ կղզի


17 «Հարթավայր — աշխարհամաս» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Մերձատլանտյան դաշտավայր — Աֆրիկա
- 2) Արաբական սարահարթ — Եվրոպա
- 3) Մեծ ավազան սարահարթ — Ավստրալիա և Օվկիանիա
- 4) Թուրանի դաշտավայր — Ասիա

18 Միջերկածովային կլիման բնորոշ է.

- 1) Ֆլորիդա թերակղզուն
- 2) Աֆրիկայի ծայր հյուսիսային մասերին
- 3) Հնդստան թերակղզու ներքին շրջաններին
- 4) Հարավային Ամերիկայի բարեխառն գոտու արևելյան մասերին

19 Ո՞ր անապատն է քարտեզում նշված Գ տառով.



- 1) Տակլա-Մական
- 2) Կարակում
- 3) Գոբի
- 4) Թար

20 Ո՞ր պետությունն է քարտեզում նշված Ե տառով.

- 1) Ղազախստան
- 2) Տաջիկստան
- 3) Թուրքմենստան
- 4) Ուզբեկստան

61 Մեքենաներ և սարքավորումներ արտահանող առաջատար երկիր է.

- 1) Գերմանիան
- 2) Ավստրալիան
- 3) Ռուսաստանը
- 4) Կանադան

62 Ճապոնիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում մեծ է անասնապահության բաժինը:
- 2) Հացահատիկային գլխավոր մշակաբույսը ցորենն է:
- 3) Երկրի արդյունաբերությունը գերազանցապես աշխատում է սեփական հումքային և վառելիքային ռեսուրսների հաշվին:
- 4) Ալյումինի, պղնձի, ցինկի ձուլարանները հիմնականում տեղաբաշխված են մետաղների խտանյութի ներկրման նավահանգիստներում:

63 Բնութագրումով որոշել պետությունը.

Այս պետությունն անմիջական ելք չունի դեպի Համաշխարհային օվկիանոս: Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով: Բնակչությունը հիմնականում պատկանում է ալթայյան լեզվաընտանիքի թյուրքական լեզվախմբին և դավանում մահմեդականության շիա ուղղությունը: Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերն են բամբակենին, թեյը: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Թուրքիան
- 2) Իրանը
- 3) Վրաստանը
- 4) Ադրբեջանը

64 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հայկական լեռնաշխարհի գետերն ունեն մեծ անկում:
- 2) Տիգրիսը պատկանում է Կասպից ծովի ավազանին:
- 3) Հայկական լեռնաշխարհը պատկանում է միայն Սև և Միջերկրական ծովերի ավազաններին:
- 4) Արաքսն ունի սառցադաշտային սնում:

56 Հյուսիսից հարավ շարժվելիս բարեխառն գոտու անտառների զոնան փոխվում է անտառատափաստանների, որովհետև.

- 1) փոխվում է ջերմության և խոնավության քանակը
- 2) հողերը ճահճանում են
- 3) ռելիեֆն աստիճանաբար դառնում է ավելի բարձրադիր
- 4) ձմեռները դառնում են խստաշունչ

57 Աֆրիկայի մերձարևադարձային (միջերկրածովային) մշտականաչ կոշտատերև անտառների և թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Համատարած խոտածածկույթի հետ աճում են միայնակ ծառեր, որոնցից նշանավոր են բաոբաբը, միմոզան, հովհարաձև ակացիան, չորադիմացկուն արմավե նին և այլն:
- 2) Տարածվում է հասարակածի երկու կողմերում՝ ընդգրկելով Գվինեական ծովածոցի մերձափնյա շրջանները և Կոնգո գետի միջին հոսանքի ավազանը:
- 3) Բնորոշ են փշոտ բույսերը՝ ուղտափուշը, օշինդրը, աղաբույսը, փշոտ թփերը, անապատային ակացիան, իսկ հարավի անապատներին ու կիսաանապատներին՝ ծիծեռնախոտը, բարձիկանման փշոտ բույսերը և այլն:
- 4) Տարեկան տեղումների քանակը 600–800 մմ է, որոնց մեծ մասը թափվում է ձմռանը, իսկ հողերը դարչնագույն են կամ դեղնակարմրավուն:

58 Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Եվրասիայում.

- 1) Մեծ Ավազան սարահարթ, Վերխոյանսկի լեռներ, Վերին լիճ
- 2) Չինական մեծ հարթավայր, Չագրոսի լեռներ, Վենեռն լիճ
- 3) Դեկանի սարահարթ, Էրեբոս լեռ, Լադոգա լիճ
- 4) Միջինդանուբյան դաշտավայր, Օրիսաբա հրաբուխ, Բալխաշ լիճ

59 Դեպի ծով ելք չունեն.

- 1) Պերուն և Բոլիվիան
- 2) Սուդանը և Անգոլան
- 3) Վիետնամը և Օմանը
- 4) Տաջիկստանը և Մոնղոլիան

60 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչության վերարտադրության ցուցանիշների վրա առավել մեծ ազդեցություն են թողնում սոցիալ-տնտեսական գործոնները:
- 2) Բնակչության վերարտադրության ամենաբարձր տեմպերը նկատվում են եվրոպական երկրներում:
- 3) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ է ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը և ցածր բնական աճը:
- 4) «Ժողովրդագրական պայթյունը» բնակչության թվի կտրուկ աճն է և բնորոշ է զարգացող երկրներին:

21 Քաղաքային և գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումը մեծ քաղաքի կամ քաղաքների շուրջը, որոնք միմյանց հետ կապված են աշխատանքային, մշակութային, կենցաղային, արտադրական և այլ կապերով, կոչվում է.

- 1) ուրբանիզացիա
- 2) ասիմիլյացիա
- 3) միգրացիա
- 4) ագլոմերացիա

22 Բնակչության վայրի ժամանակավոր կամ մշտական փոփոխության հետ կապված բնակչության տեղաշարժը կոչվում է.

- 1) բնակչության տեղաբաշխում
- 2) բնակչության բնական շարժ
- 3) տարաբնակեցում
- 4) բնակչության միգրացիա

23 Բնութագրումով որոշել պետությունը.

Այս պետությունը հյուսիսից սահմանափակված է Հիմալայան և Կարակորում լեռնաշղթաներով: Բնակչությունը բազմազգ է և բազմակրոն: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով, թեյի մշակությամբ աշխարհի առաջատարներից է: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Պակիստանը
- 2) Ինդոնեզիան
- 3) Հնդկաստանը
- 4) Չինաստանը

24 Որոշել երկրի բնակչության թիվը, եթե այդ երկրի գյուղատնտեսական հողահանդակների ընդհանուր մակերեսը 15 մլն հա է, իսկ մեկ բնակչին բաժին է ընկնում 3 հա գյուղատնտեսական հողահանդակ.

- 1) 12 մլն
- 2) 2 մլն
- 3) 18 մլն
- 4) 5 մլն

25 «Ժողովուրդ — լեզվախումբ» գույգերից ո՞րն է սխալ.

- 1) լեհեր — սլավոնական
- 2) քրդեր — թուրքական
- 3) ուզբեկներ — թուրքական
- 4) պարսիկներ — իրանական

26

«Պետություն — կառավարման ձև» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Օման — միապետություն
- 2) Շվեդիա — միապետություն
- 3) Իրան — հանրապետություն
- 4) Նիդերլանդներ — հանրապետություն

27

«Արդյունաբերության ճյուղ — տեղաբաշխման գործոն» գույգերից ընտրել *ճիշտը*.

- 1) գյուղատնտեսական մեքենաշինություն — վառելիքաէներգետիկ գործոն
- 2) թեթև արդյունաբերություն — աշխատանքային ռեսուրսների գործոն
- 3) այլումինաձուլություն — սպառման գործոն
- 4) ռոբոտաշինություն — հումքային գործոն

28

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ *ո՞ր պնդումն է սխալ*.

- 1) Բնակչության մեծ մասը դավանում է քրիստոնեության կաթոլիկ և բողոքական ուղղությունները:
- 2) Ըստ պետական կարգի՝ բացարձակ միապետություն է:
- 3) Բարձր է բնակչության խտությունը:
- 4) Բնակչության կազմում մեծ է աշխատունակ բնակչության բաժինը:

29

Նոսր բնակեցված երկրներ են.

- 1) Ինդոնեզիան և Ճապոնիան
- 2) Հայաստանը և Բելգիան
- 3) Ավստրալիան և Կանադան
- 4) Գերմանիան և Ֆրանսիան

30

Թերակղզային երկրներ են.

- 1) Իտալիան և Իսպանիան
- 2) Թուրքիան և Իրանը
- 3) Նորվեգիան և Կիպրոսը
- 4) Դանիան և Իռլանդիան

31

«Մշակաբույս — առաջատար երկիր» գույգերից ընտրել *ճիշտը*.

- 1) իսադող — Բելգիա
- 2) ցորեն — Նորվեգիա
- 3) բամբակենի — Լեհաստան
- 4) սուրճ — Կոլումբիա

Բ մակարդակ

51

Ո՞ր պնդումն է *ճիշտ*.

- 1) Տվյալ պահին նույն միջօրեականի վրա գտնվող վայրերում, կախված դրանց աշխարհագրական լայնությունից, գրանցվում են տարբեր տեղական ժամանակներ:
- 2) Բնեռային շառավիղը մեծ է հասարակածային շառավղից:
- 3) Գլոբուսի վրա բոլոր միջօրեականներն իրար հավասար են:
- 4) Հս. լ. 66° 30՝ գուգահեռականի վրա գիշերահավասարի երևույթը տարվա մեջ նկատվում է մեկ անգամ՝ դեկտեմբերի 22-ին:

52

Ժամը քանի՞ սը կլինի 7-րդ ժամային գոտում, եթե 4-րդ ժամային գոտում ժամը 15⁰⁰-ն է.

- 1) 18⁰⁰
- 2) 23⁰⁰
- 3) 11⁰⁰
- 4) 15⁰⁰

53

Ո՞ր պնդումն է *ճիշտ*.

- 1) Տոռնադոն և թայֆունը արևադարձային հզոր անտիցիկլոններ են:
- 2) Կլիմայի ցամաքայնության մեծացմանը գուգրնթաց ամռան միջին ջերմաստիճանը նվազում է:
- 3) Պասսատները տեղումներ են առաջացնում մայրցամաքների արևմտյան ափերին:
- 4) Մուսսոնային շրջաններում տեղումների մեծ մասը թափվում է ամռանը:

54

Ընտրել բնության բաղադրիչների միակ *ճիշտ* գուգորդումը.

- 1) Աֆրիկա — Օրանժ — Ատլանտյան օվկիանոս
- 2) Ավստրալիա — Մուրեյ — Խաղաղ օվկիանոս
- 3) Հյուսիսային Ամերիկա — Յուկոն — Հյուսիսային սառուցյալ օվկիանոս
- 4) Եվրասիա — Դանուբ — Խաղաղ օվկիանոս


55

Ո՞ր շարքի բոլոր կղզիները նույն օվկիանոսում *չեն*.

- 1) Իսլանդիա, Իռլանդիա, Մեծ Բրիտանիա
- 2) Թայվան, Սախալին, Ֆիլիպինյան
- 3) Շախցերգեն, Նոր Երկիր, Հյուսիսային երկիր
- 4) Հոնսյու, Կալիմանտան, Շրի Լանկա

49 Ո՞ր լեռներն են քարտեզում նշված **Բ** տառով.

- 1) Եղնախաղի
- 2) Շիրակի
- 3) Վիրահայոց
- 4) Բազումի



50 Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված **Է** տառով.

- 1) Դիլիջան
- 2) Իջևան
- 3) Ճամբարակ
- 4) Բերդ

32 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Անգորական այծերի գլխաքանակով աշխարհի առաջատար երկիրը Կանադան է:
- 2) Կակաոյի համաշխարհային բերքի մեծ մասն արտադրվում է Հարավային Եվրոպայի երկրներում:
- 3) Մանր եղջերավոր անասնապահությունը հիմնականում տեղաբաշխված է չորային կլիմա ունեցող և լեռնային շրջաններում:
- 4) Խոզերի գլխաքանակով աշխարհի առաջատար երկիրը Ռուսաստանն է:

33 Կյանքի առավել ցածր միջին տևողություն ունեն.

- 1) Մոզամբիկը և Զամբիան
- 2) Ավստրալիան և Կանադան
- 3) Ավստրիան և Բելգիան
- 4) Նիդերլանդները և Դանիան

34 Էներգետիկական հաշվեկշռում ջրէկների առավել մեծ բաժին ունեցող երկրներ են.

- 1) Չինաստանը և Ֆրանսիան
- 2) Գերմանիան և Ճապոնիան
- 3) Ուկրաինան և ԱՄՆ-ը
- 4) Նորվեգիան և Կանադան

35 Արևելյան Եփրատի վտակ է.

- 1) Մակուն
- 2) Խրամը
- 3) Ճորոխը
- 4) Բագրևանդը

36 «Գետ — դաշտ» գուգերից ընտրել **սխալը**.

- 1) Արևմտյան Եփրատ — Կարնո
- 2) Արաքս — Նախիջևանի
- 3) Արևմտյան Եփրատ — Բասենի
- 4) Արևելյան Եփրատ — Մշո

37 Ո՞ր հարթավայրն է ավելի բարձրադիր.

- 1) Արարատյան դաշտը
- 2) Շիրակի դաշտը
- 3) Աշոցքի սարահարթը
- 4) Ապարանի սարահարթը

- 38 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**
- 1) Անապատային–կիսաանապատային բուսականությունը տարածվում է 1200–1500մ բարձրությունների միջև:
 - 2) Ալպյան և մերձալպյան բուսականությունը տարածվում է 1500–2200 մ բարձրությունների միջև:
 - 3) Անտառները զբաղեցնում են ՀՀ տարածքի մոտ 10%–ը և զբաղեցնում են ՀՀ հյուսիսարևելյան և հարավարևելյան շրջանները:
 - 4) Լեռնաչորասեր բուսականությունը տարածվում է տափաստանային և անտառային բուսականության միջև:

- 39 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**
- 1) ՀՀ–ն ազգային կազմով աշխարհի առավել միատարր պետություններից է:
 - 2) ՀՀ–ում ռուսները հիմնականում բնակվում են Արմավիրի մարզի քաղաքային բնակավայրերում:
 - 3) ՀՀ–ում թվաքանակով երկրորդ ազգը ռուսներն են:
 - 4) ՀՀ–ում եզդիները հիմնականում բնակվում են Արագածոտնի մարզի քաղաքային բնակավայրերում:

- 40 **ՀՀ արդյունաբերության առաջատար ճյուղ չէ.**
- 1) ավտոմոբիլաշինությունը
 - 2) շինանյութերի արդյունաբերությունը
 - 3) գունավոր մետաղաձուլությունը
 - 4) էլեկտրաէներգետիկան

- 41 **Ո՞ր բնական լանդշաֆտն է տիրապետում Արմավիրի մարզում.**
- 1) կիսաանապատային
 - 2) անտառային
 - 3) տափաստանային
 - 4) չոր տափաստանային

- 42 **Արագածոտնի մարզի սննդի արդյունաբերության առաջատար արտադրություններն են.**
- 1) ձեթի և մսամթերքի
 - 2) հանքային ջրերի և պահածոների
 - 3) գինու և կաթնամթերքի
 - 4) ծխախոտի և շաքարի

- 43 **Ո՞ր բարձրությունն է պտղաբուծության տարածման վերին սահմանը.**
- 1) 2100 մ
 - 2) 2500 մ
 - 3) 1000 մ
 - 4) 1400 մ

- 44 **Ո՞ր երկիրն է համեմատաբար աղքատ անտառային ռեսուրսներով.**
- 1) Բրազիլիան
 - 2) Ռուսաստանը
 - 3) Ինդոնեզիան
 - 4) Իսպանիան

- 45 **Հողերի աղակալման պատճառ է.**
- 1) անտառապատ տարածքների կրճատումը
 - 2) սելավային հոսքերը
 - 3) գրունտային ջրերի մակարդակի բարձրացումը
 - 4) խորքային վարը

- 46 **Իրենց բաղադրության մեջ պարունակվող տարբեր նյութերի միջոցով մարդու օրգանիզմի վրա ցավազրկող, հանգստացնող, հակաբորբոքային ազդեցություն են ունենում.**
- 1) կերաբույսերը
 - 2) տեխնիկական բույսերը
 - 3) դեկորատիվ բույսերը
 - 4) դեղաբույսերը

- 47 **Ո՞րն է մթնոլորտի մաքրության պահպանման միջոցառումներից.**
- 1) ջերմային էլեկտրակայանների թվի ավելացումը
 - 2) կանաչ տարածքների ընդարձակումը
 - 3) քիմիական ձեռնարկությունների թվի ավելացումը
 - 4) ցեմենտի արտադրության ավելացումը

- 48 **Այն հիմնախնդիրները, որոնք ընդգրկում են ամբողջ երկրագունդը և մարդկությունը, սպառնում են նրանց ներկային ու ապագային՝ պահանջելով բոլոր ժողովուրդների ու երկրների գործողությունների միասնությունը, կոչվում են.**
- 1) բնական
 - 2) համամոլորակային
 - 3) տարածաշրջանային
 - 4) տեղական